## ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

*03 հուլիս 2025թ.*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆԻՆ**

# Հանձնարարականի կատարում

Հարգելի պարոն Բալասյան

Ուսումնասիրելով Գարիկ Ստեփանյանի կողմից 03․ 06 2025 թվականին ներկայացված դիմումին կից «Ռիրբան Հաուսինգ» ՍՊ կողմից կազմված հատակագծերը պարզ դարձավ որ առկա է սեփականկնության իրավունքով իրեն պատկանող հողմասում ինքնակամ 2023 թվականին կառուցված շինություն որը համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի ենթակա չէ վարչական տուժի նշանակման:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ (ՎԴ/10555/05/13, ՎԴ/8942/05/19) փաստել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է անձին վարչկան պատասխանատվության ենթարկելու հատուկ ժամկետներ, որոնց անցնելու դեպքում կատարված արարքը կորցնում է իր հանրային վնասակարությունը, և անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, քանի որ այդ ժամկետի լրանալուց հետո վերջինս վարչական պատասխանատվության ենթարկելը դառնում է աննպատակահարմար:

Զեկուցող՝ Անդրանիկ Եղիազարյան